

կարևոր ուսմանց ճաճանչներ են թափանձում և սերմանում են մտաւոր և բարոյական զարգացման սերմեր, որոնք լիայոյս ենք՝ ժամանակին կաճեն և կրեղմնաւորվին յօգուտ բազմակարօտ ազգիս Շատ անձինք, թէ արք և թէ կանայք՝ որոնք երկսեռ բարերար Անդամք են կոչուած մեր վերայ, նա մանաւանդ՝ մեզ խալառ անձանթօթ օտար քաղաքացիք՝ այցելութիւն են զամ մեզ, և հետաքրքրութեամբ տեղեկանալով մեր մտաւոր զարգացմանը, ազնիւ հոգւով ու սրտով՝ համակրութիւն են ցոյց տամ, ինչպէս այս տարի, մի Գանձակեցի ազգասէր անձը, Պ. Ներսէս Արրահամեան Տէր Ներսէսեանց այցելութիւն եկաւ մեզ, և բաւական ժամանակ հարցաքննելով մեզ մեր ուսած առարկաների մէջ՝ քաջպէրեց և խրախուսեց մեզ ոչ միայն բանիւք, այլ և զրամաւոր նուիրագործութեամբ, ոչ միայն մեզ, այլ և Ուսումնարանին. նուէր չէր այն՝ որ մեր ընդունելիւք Պարոնէն, այլ ուսման սիրով վառված նորա սիրտն էր որ զրաւեցինք բարերազգարար և մեր ևս մեր մտտանց աշխատասիրութիւններից նուիրեցինք նորան երկու կտոր ձեռագործութիւն: Ավ՝ ի՞նչ զարմանալի տեսարան էր մեզ համար այն ըստէն, որոյ մէջ մէք ամօթոյ և պատկառանաց վարագուլի տակ նորա առաջը կանգնած՝ մտասցնում էինք նորան կարմրելով մեր աշխատանքը. իսկ նա ազգասիրական ջիւղեանդութեամբ յօտին կանգնած ընդունելով մեր այն շնչին նուէրը, քաղցր և ազգու բասերով քաջպէրում և յորդորում էր մեզ աշխատել զարգանալ մտաւորապէս և բարոյապէս և լինել ժամանակին արժանաւոր մայր ապագայ սերնդոց, այն ըստէ յումը որպիսի ուրախութեամբ էին կայտառում մեր քնքուշ սրտերը, երբ մտաբերում էինք թէ՛ մեր բոլոր Հայկեան ժողովրդոց զաւակներնք, և նոքա մեր ծնողները, Փառք նախախնամութեան Աստուծոյ, որ արժանացուել է մեզ զարգանալ մտաւորապէս և բարոյապէս և լինել ապագայումը օրինաւոր մայր Հայկեան սերնդոց:

Ընդունել կմարթեմք Խմբագրութենէդ Արարատայ մեր մտաց այս անդրանիկ ծնունդը Հայկական պարբերութեանց մէջ, և իբրև մեր ուսման կրախայրիք բարեհաճել հրատարակել ամ-

սաղրոյդ էջերի մէջ, որով կքաջալերուինք մեր միւսանդամ էլ մեր մտաւոր կարողութեան պէս զանազան յօգուածներ աշխատասիրել և ուղարկել, որոնք կարծեմք ուրախութիւն կգատճառեն յարդոյ ընթերցողներին:

Աշխատանքի և Կարգի մասին Հայոց Օրէնդարակն Ընդունելու Դրոշմէ Երկրորդ Գլխաւոր:

- Մագդաղինէ Գրիգորեան.
- Մագդաղինէ Յարութիւնեան.
- Գանուշակ Թումանեան.
- Եղիսաբէթ Գարսեանեան.
- Մանուշակ Սաֆարեան.
- Աննա Մեսիկեան.

9 Հոկտեմբերի 1875 -ին Երևան:

ՍՈՒՐԷՍԱԿԱԿԵ ԲԻՒՋԱՆԳԵԱՆ.

ՊԱՌԱԿՏՈՒՄԻ Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՍՍ.

Մեր կամօղիկ ազգայնոց մէջ այս օրերս նոր պատակառում մ'ալ ծագեցաւ:

Անենտկի Մխիթարեան միաբանութեան Արքահայրն և հոն դանդաղ միաբանները Պաթղիկ հայոց խնդրոյն նկատմամբ Պապին համած վերջին կոնգակն ընդունած և Հասունեանի կողմն անցած լլլալով Ա. Պօլիս գանուղ Մխիթարեանց մեծ մասը չընդունեցին իրենց Արքային և միաբանութեան մէկ մասին այս ըրածը, և այսպէս յիշեալ միաբանութիւնն իր մէջ երկուքի բաժնուեցաւ:

Այս երկպառակութեան պատճառաւ, Պիրակի օրը Գատը զիւղի Մխիթարեանց վարժարանին մէջ գանուղ վարդապետներէն երկուքը հակահասունեանց ձեռք գորս հանուեցան վարժարանէն՝ վերոյիշեալ կոնգակին հպատակելուն համար, և միայն հակահասունեան վարդապետը միւնաց հոն, ընդ վերատեսչութեամբ Շիշմանեանի Հ. Աւարդան վարդապետի, որ նշոյնպէս մերժած է այն կոնգակը:

ՎՍԵՄ. ՆՈՒՊԱՐ ՓԱՀԱ.

Չ միւսնից Արշալոյս լրողոյ մէջ ուրախութեամբ կարգացինք հետեւեալը:

Արշալոյս նախընթաց թուով ուրախ սրտիւ ծանուցինք մեմնա. Նուպար փաշային յաստիճան միջնորդէն բարձրանալն: Գահիրէի մեր մեծարգոյ բարեկամներէն մէկը՝ կայսերական այս աստիճանաբաշխութեան վրայօք հետեւեալ մանրամասն տեղեկութիւնները կը հաղորդէ մեզ:

« Անցեալ ամսոյ 26ին օգոստա. Սուլթանին թիկնապահներէն Բէշիտ պէյը՝ պատերազմական Թալխա շոգնաւաով Ա. Պօլսէն հասաւ ի Գահիրէ: Նորին Ասեմնութեան յանձնուած էր և կը բերէր զկայսերական հրովարտակն, որով՝ ըստ խնդրոյ բարձրապատիւ Խըտիվին, իւր Արտաքին Գործոց Պաշտօնեաց մեմնա. Նուպար փաշային միջնորդութեան մեծ աստիճանը կը շնորհուէր:

« Աւստի յիշեալ ամսոյ 28ին այս հրովարտակը մեծ հանգիսիւ կարգացուեցաւ ի փոխարքայական պալատն Գասր - էլ - Նիլ կոչուած. ուր ներկայ էին եգիպտական իշխանութեան բոլոր նախարարներն՝ իրենց համազգեստովք: Երկու զօրախումբ պալատին բակը՝ յերկուս բաժանեալ բարևի կայնած էին. յորժամ զինուորական նուագարանաց ներդաշնակութիւնն դադարեցաւ, մեմն. Թալխա փաշան ի լուր ամենեցուն սկսաւ կարդալ վեհա. Սուլթանին հրովարտակը. զոր՝ լմնցնելէ ետև, ակնածական յարգանքօք յանձնեց ի ձեռս Խըտիվին: Նորին Բարձրութիւնն ևս իւր ձեռօքն յանձնեց զկայսերական հրովարտակն՝ իւր սիրելի նախարար Հայկազուն Նուպար փաշային՝ իւր սովորական մարդասիրութեամբը շնորհաւորելով զՆորին Ասեմնութիւնն: Յետ այնորիկ բոլոր հանգիսականք՝ իրենց խնդակցութիւնները բազում սիրով յայտնեցին Արտաքին Գործոց Պաշտօնէին:

« Երկու օր ետքը մեմնա. Նուպար փաշան՝ այս բարեկատեհ առթիւ, 24 անձանց համար յոյժ փառաւոր հացկերոյթ մի տուաւ յապարանս իւր ուր բաց ի կայսերական թիկնապահ Բէշիտ պէյըն, ներկայ էին նաև զահաժառանգ իշխանը, բարձր սպատիւ Թէվիք փաշան, իւր եղբայրը,

փոխարքայական տանը վերաբերեալ փաշայք և բարձրաստիճան նախարարք: »

Ասեմնա. Նուպար փաշային յայս մեծ աստիճան բարձրանալն՝ որչափ որ պարծանք և անզուգական ուրախութիւն մին է ընդհանուր Հայոց ազգին, նոյնչափ ազգային խորին երախտագիտութեան արժանի է վեհ և ազնուական զգացմունքը բարձրա. Խըտիվին, որ զիսէ վարձատրել մարդասիրարար զհանձարեղ և զկենցաղագէտ հաստարիմ՝ նախարարս իւր:

Արշալոյս Արարտեան, Թիւ 971, Սեպտեմբեր 22.

Հետեւեալ յօդուածին մէջ ուշադրութեան արժանի պարբերութիւններ ևս գտնուելով, արժան կը համարուիք օրինակել աստ:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԳԻՍ Ի ԶՈՒԻՑՑԵՐԻԱ.

Գլխաւոր երկու միջոցներ կան մարդկութեան ապրուստն հայթայթող, այս ինքն երկրագործութիւնն ու վաճառականութիւնն. որովհետև երկրագործը զհացն հողէն ի գոյ կածէ և վաճառականը զայն կը տարածէ ամենայն ուրեք, և այս երկու գլխաւոր արդիւնքը մարդուս քրտանց ամենարդար վաստակը կրնայ սեպուիլ, քանի որ ոչ շողորթութիւն, ոչ ստախսութիւն, ոչ անիրաւ պահանջմունք և ոչ ալ հարստահարութիւնք կան գոյա մէջ, Եթէ բոլոր արհեստներու և շահու մոյր երկրագործութիւնն ու վաճառականութիւնը ընդունուելէն յետոյ, նաև այս երկուքն ալ քննելք՝ կրնանք ըսել որ միմիայն երկրագործին վաստակն է սուրբ վաստակ, և թէպէտ պէտք էր որ երկրագործը մարդոց երջանկագոյնը լինի: Արժեք մը կայ թէ, Հայերուս յԵւրոպայում շատնալովը, Եւրոպան կը ճանչնայ զՀայաստան, թէ մեծ պատիւ է Հայութեան եթէ Եւրոպայի խորհրդարաններում, պալատներում և ուրիշ քաղաքական, ուսումնական և ըն. բարձր ասպարէզներում, բարձրաստիճան Հայեր գտնուին, թէ այս վերջիններով Եւրոպան առաւել ևս կճանչնայ և կը սիրէ զՀայն